ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ

Ժաննա Անդրեասյան

Արթուր Մարտիրոսյան

Արկադի Պապոյան

Մարիամ Գիգոյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության մշակութային միջազգային համագործակցության բաժնի պետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Թբիլիսի (Վրաստան)

2023 թվականի մարտի 9-10-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Վրաստանի կրթության և գիտության նախարարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Երկկողմ համագործակցության և համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր քննարկելու նպատակով

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Իմ գլխավորած պատվիրակությունը պաշտոնական երկօրյա այցով մեկնել էր Վրաստան՝ երկկողմ համագործակցության և համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր քննարկելու նպատակով:

Պատվիրակության կազմում էին նաև ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և Երևանի Վ. Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի տնօրեն Լուսինե Ղասաբօղլյանը:

Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպել է Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր Ջաբա Սամուշիայի հետ:

Ողջունելով պատվիրակությանը՝ ռեկտորը պատրաստակամություն է հայտնել լավագույնս համագործակցելու կրթության և գիտության ոլորտներում: Ջաբա Սամուշիան առանձնահատուկ կարևորել է միջբուհական համագործակցությունը՝ ընդգծելով, որ նախարարի առաջին այցը Թբիլիսիի պետական համալսարան խորհրդանշական է: Նրա խոսքով՝ հայ-վրացական հարաբերություններում գիտական կապերն ունեն մեծ նշանակություն: Ռեկտորն անդրադարձել է համալսարանում 1922 թ.-ին հիմնադրված հայագիտական ամբիոնի գործունեությանը և զարգացման հեռանկարներին: Նա նշել է, որ հայագիտության ամբիոնում կրթությունը կազմակերպվում է բոլոր մակարդակներում՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա: Ջաբա Սամուշիան տեղեկացրել է, որ բակալավրիատում ավելացրել են ևս 60 կրեդիտ, որի շրջանակում կպատրաստվեն նաև համապատասխան ուսուցիչներ: Ռեկտորը վստահություն է հայտնել, որ միջբուհական համագործակցությամբ կիրականացվեն մի շարք նախաձեռնություններ՝ ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակման ծրագրեր:

Հանդիպման ընթացքում շնորհակալություն եմ հայտնել ջերմ ընդունելության համար՝ կարևորելով հայ-վրացական բարեկամական կապերը և նշել, որ հայ-վրացական ընդհանուր պատմությունը մեր արժեքն է՝ ընդգծելով, որ խորհրդանշական է հայագիտությանն ու վրացագիտությանն ուղղված համագործակցությունը: Առանձնահատուկ կարևորել եմ Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտական ամբիոնում մանկավարժական կադրերի պատրաստումը: Նշել եմ, որ ՀՀ կառավարության ծրագրում առանձնահատուկ տեղ է գտել դպրոցներում տարածաշրջանային լեզուների զարգացումը, և այդ նպատակով

սեպտեմբերից ՀՀ երեք դպրոցում դասավանդվում է վրացերեն: Վստահություն եմ հայտնել, որ ԵՊՀ-ն մեծ պատրաստակամությամբ կհամագործակցի Թբիլիսիի պետական համալսարանի հետ, որի շրջանակում կիրականացվեն համատեղ կրթական ծրագրեր և նշել, որ նախարարությունը կնպաստի այդ համագործակցության զարգացմանը:

Հայտնել եմ, որ ներկայում օտարերկրյա պետություններում գործող բուհերում և կրթագիտական կենտրոններում իրականացվում է հայագիտական կենտրոնների և ամբիոնների ստեղծման ծրագիր: ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում է 13 հայագիտական կենտրոնների գործունեության զարգացման ծրագիր: Նշել եմ նաև, որ ուրախ կլինեմ տեսնել Թբիլիսիի պետական համալսարանը և դրա հայագիտական ամբիոնը 2023 թվականի հունիսին կայանալիք հայագիտական խորհրդաժողովի աշխատանքներին:

ԵՊՀ ռեկտորը նույնպես կարևորել է համագործակցությունը Թբիլիսիի պետական համալսարանի հետ և վստահություն հայտնել, որ համատեղ ջանքերով լավագույնս կնպաստեն հայագիտության զարգացմանը Թբիլիսիի պետական համալսարանում և վրացագիտության զարգացմանը՝ ԵՊՀ-ում: Նրա խոսքով՝ համագործակցության շրջանակում կիրականացվեն համատեղ հետազոտական ծրագրեր, ուսանողների, դասախոսների և գիտնականների փոխանակման ծրագրեր:

Հանդիպման ավարտին ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և Թբիլիսիի պետական համալսարանի ռեկտոր Ջաբա Սամուշիան ստորագրել են համագործակցության հուշագիր:

Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպել է Վրաստանի կրթության և գիտության նախարար Միխեիլ Չխենկելիի հետ: Հանդիպմանը վրացական կողմից ներկա էին նախարարի առաջին տեղակալ Թամար Մախարաշվիլին և նախարարի տեղակալներ Նունու Միցկևիչը և Վալերիան Գոբրոնիձեն:

Ողջունելով պատվիրակությանը՝ Վրաստանի կրթության և գիտության նախարար Միխեիլ Չխենկելին առանձնահատուկ կարևորել է հայ-վրացական բարեկամական հարաբերությունները: Նա վստահություն է հայտնել, որ ստորագրվող հուշագրի շրջանակում կիրականացվեն համատեղ նախաձեռնություններ, որոնք կնպաստեն հայ-վրացական բարեկամական կապերի ամրապնդմանը: Վրաստանի կրթության և գիտության նախարարը կարևորել է նաև համագործակցությունն աստղաֆիզիկայի բնագավառում:

Հանդիպման ժամանակ շնորհակալություն եմ հայտնել հրավերի և ընդունելության համար՝ կարևորելով բարեկամական սերտ համագործակցությունը Հայաստանի և Վրաստանի միջև: Երկկողմ հարաբերությունների շարունակական զարգացումն ապահովելու նպատակով առաջարկել եմ զարգացնել և ընդլայնել կրթության և գիտության բնագավառներում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները: Շնորհակալություն եմ հայտնել նաև Վրաստանում հայերենի ուսուցմամբ հանրային դպրոցների աջակցության և արդյունավետ համագործակցության համար և հայտնել ԿԳՄՍ նախարարության կողմից համագործակցությունը շարունակելու պատրաստակամություն՝ Վրաստանի հայերենով ուսուցմամբ հանրային դպրոցների՝ հայերենի դասագրքերով ապահովման, ինչպես նաև հայոց լեզվի և գրականության ուսուցիչների ատեստավորման ընթացակարգերում համագործակցության աշխատանքները շարունակելու վերաբերյալ: Համագործակցելով Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ՝ շուրջ 18000 կտոր դասագիրք և մեթոդական գրականություն առաքվել է Թբիլիսի՝ Վրաստանի հայերենով ուսուցմամբ հանրային դպրոցներին փոխանցելու համար:

Հայտնել եմ նաև ԿԳՄՍ նախարարության պատրաստակամությունը՝ իրականացնելու հայոց լեզվի և գրականության ուսուցիչների ու դասվարների մասնագիտական վերապատրաստում:

Կարևորել եմ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև դպրոցական և միջբուհական համագործակցությունը, որի կարևոր ձեռքբերումներից է Երևանի Վարդգես Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի և Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի միջև համագործակցության հուշագրի, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի և Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրումը: Առաջարկել եմ ընդլայնել համագործակցության շրջանակը՝ ընդգրկելով նաև Հայաստանի և Վրաստանի այլ ուսումնական հաստատություններ և կրթագիտական կառույցներ:

Ներկաներին տեղեկացրել եմ նաև ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների մասին և առաջարկել դիտարկել փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը՝ ուղղված ՀՀ դպրոցներում վրացերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ներդրմանը: Նշվել է, որ փորձի փոխանակումը պետք է իրականացվի

հանրակրթության չափորոշիչների և կրթական ծրագրի մշակման, ուսումնական գրականության պատրաստման և ուսուցիչների կարողությունների հզորացման շրջանակում:

Երկուստեք կարևորվել է նաև միջպետական ծրագրի շրջանակում իրականացվող կրթաթոշակային ծրագիրը, որի միջոցով ՀՀ քաղաքացիները հնարավորություն են ստանում բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանի բուհերում, իսկ Վրաստանի քաղաքացիները՝ ՀՀ բուհերում:

Առաջարկել եմ ընդլայնել նաև Էրազմուս+ համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը, որը կնպաստի երկու պետությունների բուհերի միջազգայնացմանը և կայուն զարգացման ապահովմանը, ինչպես նաև զարգացնել փոխգործակցությունը գիտության ոլորտում՝ իրականացնելով համատեղ կրթագիտական ծրագրեր, որը հնարավոր է դիտարկել նաև Horizon Europe ծրագրի շրջանակում:

Հանդիպման ընթացքում ստորագրվել է «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև կրթության և գիտության ոլորտում համագործակցության մասին» հուշագիր: Փաստաթղթով նախանշվում են համագործակցության զարգացման ուղղությունները, նախատեսվում է նաև փոխանակման ձևաչափով կրթաթոշակային տեղերի ծրագիր:

Հանդիպման ավարտին Վրաստանի կրթության և գիտության նախարար Միխեիլ Չխենկելիին հրավիրել եմ Հայաստան:

Այցի ընթացքում այցելել եմ Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոց, որտեղ հանդիպել է տնօրեն Իրինա Ժամկոչյանի և մանկավարժական անձնակազմի հետ: Վրացական կողմից ինձ ուղեկցել է Վրաստանի կրթության և գիտության նախարարի առաջին տեղակալ Թամար Մախարաշվիլին:

Կարևորել եմ հայ-վրացական բարեկամական կապերը և կրթության ոլորտում իրականացվող բոլոր համատեղ նախաձեռնությունները՝ ուղղված երկկողմ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Կարևորել եմ նաև Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ համագործակցությունը, որի շրջանակում Վրաստանում հայերեն ուսուցմամբ հանրային դպրոցներին տրամադրվում են հայոց լեզվի և գրականության դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ, ինչպես նաև իրականացվում է հայերեն դասավանդող ուսուցիչների ատեստավորում: Կարևորել եմ նաև Թբիլիսիի պետական համալսարանում գործող հայագիտական ամբիոնի գործունեությունը և զարգացումը, որի

շրջանակում համալսարանում պատրաստվելու են հայոց լեզվի և պատմության մանկավարժներ:

Շնորհակալություն եմ հայտնել անձնակազմին աշխատանքի համար՝ նշելով, որ դպրոցի ամեն մի անկյունից երևում է աշխատանքի սրտացավությունն ու հոգատարությունը: Ընդգծել եմ, որ ուրախ եմ, որ հենց այս պատմական շենքում և այս միջավայրում է իրականացվում կրթության գործընթացը: Գոհունակություն եմ հայտնել նաև, որ անձնակազմից շատերն անցած տարի մասնակցել են ուսուցիչների ատեստավորմանը՝ հայոց լեզու և գրականություն առարկաներից, և շնորհակալություն եմ հայտնել Վրաստանի կրթության և գիտության նախարարությանը շարունակական համագործակցության համար:

Նշել եմ, որ թե՛ տարածաշրջանում, և թե՛ ամբողջ աշխարհում Քովիդի համավարակը կրթական համակարգի համար դարձել էր ամենամեծ փորձություններից մեկը, և ուսուցիչներն այդ ընթացքում հերոսական աշխատանք են կատարել՝ այդ պայմաններում երեխաների կրթությունն ապահովելու համար:

Այցի ընթացքում Երևանի Վարդգես Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի և Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Այցի շրջանակում Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարի տեղակալ Իրակլի Գիվիաշվիլիի ուղեկցությամբ այցելել եմ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոն, որտեղ հանդիպել եմ թատրոնի տնօրինությանը և անձնակազմին, ինչպես նաև ծանոթացել թատրոնի վերանորոգման աշխատանքների ընթացքին:

Նշվել է, որ թատրոնի վերաբացումը նախատեսվում է 2023 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Առաջարկվել է թատրոնի պաշտոնական վերաբացումը դիտարկել Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի շրջանակում: Առանձնահատուկ կարևորել ենք թատրոնի գործունեությունը և վերահաստատել պատրաստակամությունը՝ աջակցելու թատրոնի գործունեությանը:

Այցի ընթացքում այցելել եմ նաև Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցի և հայորդաց տուն, որտեղ ծանոթացել եմ տնօրինության և սաների հետ: Հայորդաց տան տնօրեն Ե. Մարկոսյանը ներկայացրել է կրթամշակութային կենտրոնի և կիրակնօրյա դպրոցի գործունեությունը, հոգևոր կապը համայնքի հետ, որն ունի առանձնահատուկ

դերակատարություն՝ երեխաներին հայոց լեզու, գրականություն, պատմություն և մշակույթ դասավանդելու գործում:

Նշվել է, որ կազմակերպվող մշակութային միջոցառումներն ունեն առանձնահատուկ նշանակություն՝ երեխաների մոտ հայեցի կրթությունը և մշակույթը զարգացնելու առումով: Պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել համատեղ կրթամշակութային միջոցառումներ և կազմակերպել փոխադարձ այցեր:

Այցի ընթացքում պատվիրակությունն այցելել է նաև հայ գրողների պանթեոն, որտեղ հարգանքի տուրք է մատուցել նրանց հիշատակին և ծաղիկներ խոնարհել շիրիմներին:

Այցի ընթացքում ինձ ընդունել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Հանդիպմանը մասնակցել են նաև Վրաստանի կրթության և գիտության նախարար Միխեիլ Չխենկելին և Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը:

Իրակլի Ղարիբաշվիլին կարևորել է հայ-վրացական բազմակողմ հարաբերությունները և արդյունավետ համագործակցությունը: Նշվել է, որ Հայաստանին և Վրաստանին կապում են դարավոր պատմությունը և բարիդրացիական հարաբերությունները: Վրաստանի վարչապետը վստահություն է հայտնել, որ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներում համագործակցությունը կնպաստի հայ-վրացական բարեկամական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

Հանդիպման ընթացքում շնորհակալություն եմ հայտնել ընդունելության համար՝ կարևորելով բարեկամական սերտ համագործակցությունը Հայաստանի և Վրաստանի միջև: Այս համատեքստում ներկայացրել եմ ԿԳՄՍ նախարարության պատրաստակամությունը՝ ընդլայնելու փոխհամագործակցությունը կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդական քաղաքականության բնագավառներում: Փաստել եմ, որ համատեղ ծրագրերի իրականացումն էլ ավելի կամրապնդի երկու ժողովուրդների միջև բարեկամական կապը:

Շնորհակալություն եմ հայտնել նաև Վրաստանում հայերենի ուսուցմամբ հանրային դպրոցներին աջակցելու համար՝ կարևորելով կրթության և գիտության ոլորտներում արդյունավետ համագործակցությունը: Անդրադարձել եմ նաև փորձի փոխանակման ծրագրեր իրականացնելու հնարավորությանը՝ ուղղված ՀՀ դպրոցներում վրացերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ներդրմանը, ինչպես նաև միջպետական ծրագրի շրջանակում իրականացվող կրթաթոշակային ծրագրի կարևորությանը, որի միջոցով ՀՀ քաղաքացիները

հնարավորություն են ստանում բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանի բուհերում, իսկ Վրաստանի քաղաքացիները՝ ՀՀ բուհերում:

Մշակույթի ոլորտում կարևորել եմ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գործունեությունը և շնորհակալություն հայտնել Վրաստանի կառավարությանը՝ մշտապես ցուցաբերվող աջակցության համար: Հայտնել է հայկական կողմի պատրաստակամությունը՝ 2023-24 թթ.-ին կազմակերպելու փոխադարձ մշակույթի օրեր: Տեղեկացրել եմ, որ աշխատանքները համակարգելու նպատակով հայկական կողմը մշակել է «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության գործերի նախարարության միջև Հայաստանում և Վրաստանում փոխադարձ մշակույթի օրերի անցկացման մասին» փոխըմբռնման հուշագրի նախագիծ, որը դեռևս գտնվում է ներպետական համաձայնեցման փուլում և շուտով կներկայացվի վրացական կողմին՝ փոխհամաձայնեցման:

Քննարկվել են նաև սպորտի ոլորտում համագործակցությանն առնչվող հարցեր: Վրաստանի վարչապետին տեղեկացրել եմ Հայաստանում նախատեսվող միջազգային մարզական միջոցառումների՝ Ծանրամարտի Եվրոպայի մեծահասակների և Սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնությունների մասին:

Անդրադարձել եմ նաև երիտասարդական քաղաքականության բնագավառում համատեղ ծրագրեր իրականացնելու կարևորությանը՝ ընդգծելով հայ-վրացական երիտասարդական ֆորումի անցկացումը, որի նպատակն է զարգացնել երկխոսությունը երիտասարդների միջև:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

- Ստորագրվել է «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև կրթության և գիտության ոլորտում համագործակցության մասին» հուշագիրը.

- Ստորագրվել է «Երևանի Վարդգես Պետրոսյանի անվան N 51 հիմնական դպրոցի և Թբիլիսիի N 104 հանրային դպրոցի միջև» համագործակցության հուշագիրը.

- Ստորագրվել է «Երևանի պետական համալսարանի և ՀԻԻԱ - Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը

- Ձեռք է բերվել հետագայում «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության գործերի նախարարության միջև Հայաստանում և Վրաստանում փոխադարձ մշակույթի օրերի անցկացման մասին» փոխըմբռնման հուշագիր ստորագրելու պայմանավորվածություն.

- Վրացական կողմը կդիտարկի Ղազարոս Աղայանի տուն-թանգարանի վերանորոգման հնարավորությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության գործերի նախարարության միջև Հայաստանում և Վրաստանում փոխադարձ մշակույթի օրերի անցկացման մասին» փոխըմբռնման հուշագրի նախագիծը ներպետական համաձայնեցումից հետո կներկայացվի վրացական կողմին՝ փոխհամաձայնեցման:

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

15.03.2023

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169